

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Մայիսի 3-ին, շաբաթ.—Հին տոմարով Զատկի տոնի առթիվ, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, Ռոստով և Զալտոր մեկնեց Մայր Աթոռի դիվանապետ և Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ տ. Արսեն եպս. Բերբերյանը՝ ս. պատարագի մատուցմամբ և Բանին կենաց քարոզությամբ մխիթարելու տեղի հայ հավատացյալներին:

Ռոստովի օդանավակայանում սրբազան հորը դիմավորում են Ռոստովի և Զալտորի եկեղեցիների քահանա հայրերը, եկեղեցական խորհուրդների նախագահները և հավատացյալներ:

Ս. Զատկի Ծրագալուցին տ. Արսեն եպս. Բերբերյանը ներկա է լինում Զալտորի հայոց եկեղեցում: Պատարագում է տ. Թադեոս քհն. Ավագյանը: Տ. Արսեն սրբազանը ս. պատարագի ընթացքում, «Հայր մեր»-ից առաջ, քարոզում է օրվա խորհրդի հոգևոր նշանակության մասին՝ հաղորդելով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրհնություններն ու ողջույնները:

Ծրագալուցի ս. պատարագից հետո համայնքը, ի պատիվ տ. Արսեն սրբազանի, ընդունելություն է կազմակերպում:

Մայիսի 4-ին, Զատկի տոնի առիթով, տ. Արսեն եպիսկոպոսը պատարագում և «Մահուամբ զմահ կոխեաց» բնաբանով խանդավառ քարոզ է խոսում Ռոստովի հայոց ս. Կարապետ եկեղեցում՝ հաղորդելով Հայոց Հայրապետի ողջույններն ու օրհնությունները: Քարոզիչ սրբազանը խոսում է նաև Հայոց Հայրապետի եկեղեցաշեն, հայրենանվեր ու խաղաղասիրական բեղուն գործունեության մասին:

Ռոստովի հայոց հոգևոր հովիվն է ճեմարանավարտ տ. Գրիգոր քահանա Տերտերյանը:

Ս. պատարագից հետո համայնքը, ի պատիվ սրբազան հոր, ընդունելություն է կազմակերպում:

Ապա սրբազանը, տ. Գրիգոր քահանայի ուղեկցությամբ, այցելում է Ռոստովի ռուսաց եկեղեցին և սիրալիր զրույց ունենում ռուսաց եկեղեցու առաջնորդ տ. Հովասափ եպիսկոպոսի հետ:

Այնուհետև սրբազանը, Ռոստովի հայոց եկեղեցու Եկեղեցական խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի նախագահների ընկերակցությամբ, այցելում է տեղի՝ Մինիստրների սովետին առընթեր եկեղեցական գործերի լիազորին:

Այսօր Ռոստովում ապրում են շուրջ 30.000 հայեր, իսկ Զալտորում՝ 15.000:

Թե՛ Ռոստովի և թե՛ Զալտորի համայնք-

ներն ունեն իրենց եկեղեցիները, եկեղեցական մարմինները և հարազատորեն կապված են Մայր Աթոռ սուրբ Էջմիածնին ու հըպարտ են և մխիթարված Հայոց Հայրապետի և Մայր Աթոռի եկեղեցաշեն, հայրենանվեր գործունեությամբ:

Տ. Արսեն եպիսկոպոսը մայիսի 5-ին վերադառնում է Մայր Աթոռ:

Նույն առիթով և նուն օրերին ներքին թեմեր են մեկնում Մայր Աթոռի այլ միաբաններ:

* * *

Մայիսի 4-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում սուրբ պատարագ է մատուցում տ. Հովհաննես ավ. քհն. Մարուքյանը:

* * *

Մայիսի 8-ին, հինգշաբթի.—Համբարձումն Քրիստոսի.

Օրվա տոնի առիթով Մայր տաճարում սուրբ պատարագ է մատուցում տ. Մասիս աբեղ. Գալստյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Համբարձաւ Տէրն մեր յերկինս» (շարական) բնաբանով:

Հավարտ սուրբ պատարագի, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի նախագահությամբ, կատարվում է մաղթանք՝ «ի յիշատակ փոխադրութեան Հայրապետական Աթոռոյն հայոց ի Սսոյ ի սուրբ Էջմիածին» (1441 թ. մայիս):

* * *

Մայիսի 11-ին, կիրակի.—Երկրորդ Ծաղկազարդ.

Այսօր Մայր տաճարում սուրբ պատարագ է մատուցում տ. Գրիգորիս աբեղ. Բունիաթյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Սա է որ եկն ջրով և հոգւով և արեամբ, Յիսուս Քրիստոս. ոչ ջրով միայն, այլ և արեամբ և ջրով» (Ա Հովհ. Ե 6) բնաբանով:

* * *

Մայիսի 18-ին, կիրակի.—Հոգեգալուստ (Պենտեկոստէ).

Այսօր Մայր տաճարում սուրբ պատարագ է մատուցում տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը:

Ս. պատարագի ընթացքում ընթերցվում է սուրբ Ներսես Լամբրոնացու «Ստիպիմ ի սիրոյ» Հոգեգալստյան տոնին նվիրված ճառ-աղոթքը:

* * *

Մայիսի 25-ին, կիրակի.—Ս. կիրակի զկնի Հոգեգալստեան. Սկիզբն Յարութեան կիրակէից. Յիշատակ Եղիայի մարգարէին.

Այսօր Մայր տաճարում սուրբ պատարագ է մատուցում տ. Վազգեն վրդ. Թադոյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Ողորմութիւն քո Տէր զհետ իմ եկեսցէ զամենայն աւուրս կենաց իմոց» (Սաղմ. ԻԲ 6) բնաբանով:

Հավարտ սուրբ պատարագի «կատարի հոգեհանգիստ... ի յիշատակ աշխարհազօրաց և զօրավարացն Հայոց որք կատարեցան ի հերոսամարտին Սարդարապատի 1918 ամի, վասն հաւատոյ և հայրենեաց»:

* * *

Մայիսի 26-ին, երկուշաբթի.—Սրբոց կուսանացն Հռիփսիմեանց.

Այսօր, օրվա տոնի առիթով, սուրբ Հռիփսիմե տաճարում պատարագ է մատուցում վանքի վանահայր տ. Եղիշե քհն. Բաղրամյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում սուրբ Հռիփսիմե կույսի կյանքի և նահատակության հոգեվոր նշանակության մասին:

Ս. պատարագին ներկա են լինում Մայր Աթոռի միաբանությունը և հոգևոր ճեմարանի սաները:

Հավարտ սուրբ պատարագի կատարվում է հոգեհանգստյան կարգ՝ սուրբ Հռիփսիմե տաճարի վերանորոգության բարերարներ Հյուսիսյան և Մանուկյան գերդաստանների ննջեցյալների հիշատակին:

* * *

Մայիսի 27-ին, երեքշաբթի.—Ս. կուսանացն Գայիանեանց.

Այսօր, օրվա տոնի առիթով, սուրբ Գայանե տաճարում իր անդրանիկ պատարագն է մատուցում նորընծա տ. Արտակ քհն. Սիմոնյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Առաքեա՛, Տէ՛ր, զլոյս քո և զճշմարտութիւն քո, զի առաջնորդեալ հանցեն զիս ի լեառն և ի սուրբ յարկս քո» (Սաղմ. ԽԲ 3) բնաբանով:

Ս. պատարագին ներկա են լինում Մայր Աթոռի միաբանությունն ու հոգևոր ճեմարանի սաները:

Հավարտ սուրբ պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ սուրբ Գայանե վանքի վանական գերեզմանատանը թաղված Մայր Աթոռի միաբանների հիշատակին:

*
* *

Նույն օրը, առավոտյան ժամը 9-ին, Մոսկվա է մեկնում Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը՝ դիմավորելու համար Վեհափառ Հայրապետին, որ Ռումինիա և Բուլղարիա կատարած Իր պաշտոնական և հովվապետական այցելությունից վերադառնալու է Մոսկվա մայիսի 28-ին:

*
* *

Նույն օրը Կանադայից Մայր Աթոռ է ժամանում տ. Ժիրայր վրդ. Թաշճյանը:

*
* *

Մայիսի 28-ին, չորեքշաբթի.—Այսօր ավարտվում են հոգևոր ճեմարանի 1974—1975 ուսումնական տարվա դասավանդությունները և սկսվում ամավերջի քննությունները:

*
* *

Մայիսի 29-ին, հինգշաբթի.—Տօն սրբոյն Յովհաննու Կարապետին և Աթանագինեայ եպիսկոպոսին.

Այսօր ս. Շողակաթ տաճարում, օրվա տոնի առիթով, պատարագ է մատուցում տ. Գրիգոր քհն. Փանոսյանը:

Հավարտ ս. պատարագի հոգեհանգստյան պաշտոն է կատարվում՝ վանքի վերանորոգության բարերար Գալենտերյան գերդաստանի ննջեցյալների հիշատակին:

*
* *

Մայիսի 31-ին, շաբաթ.—Տօն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելն ի Վիրապէն.

Այսօր Մայր տաճարում, օրվա մեծ տոնի առիթով, ս. պատարագ է մատուցում տ. Վազգեն վրդ. Թադոյանը և քարոզում «Տէ՛ր, սիրեցի զվայելչութիւն տանն քո, և զտեղի յարկի փառաց քոց» (Սաղմ. ԻԵ 8) բնաբանով:

ՀԱՅԿ ԱՐՄ. Ս.Ս.Հ. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ